

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԱՍԱՐԴՈՆԻ ՀԱՏՈՒԱԾԱԿՈՂՄԸ

## ԵՐՐՈՐԴ ՍԻՆԱԿ

1. Պիթ-Յուփուրի<sup>(46)</sup> (Շիգգու<sup>(47)</sup>), 2. Ին-Իմմէ<sup>(48)</sup> (Խիլտ<sup>(49)</sup>ուա, 3. Քարթի-Իմմէ, Պի(րու<sup>(50)</sup> գի)լմէ<sup>(51)</sup>, 4. Պիթիրոն-Տէ<sup>(52)</sup>, Սակու, (Ամ)բա, 5. Պիթ<sup>(53)</sup>-Կի-սիմա, Պ(ի)<sup>(54)</sup>րկի, 6. Կամպուլու<sup>(55)</sup>, Տալա՛ւիմմէ<sup>(56)</sup>, Իսիսի-Իմմէ, 7. քաղաքներ, որոնք Սիգոնի չուրջն են, 8. արօտավայր և գուռ մը, իր ամրոցները, 9. զորս, տիրոջ, Աշուրի օգնութեամբ գրաւեցին ձեռքերս. 10. Ալեղովս աւարուած մարդիկը, լեռներու և ծովու, 11. (և) արեւածագին, հոն բնակիլ տուի, և 12. աւելցուցի Ասորեստանի սահմանին վրայ. Այս գաւառը, 13. անգամն ալ գրաւեցի, զօրավարս իբրեւ քաղաքապետ 14. կարգեցի իրենց վրայ, և հարկ և տուրք, 15. նախորդ անգամէն աւելի, բարձրացուցի, և զրի իրենց վրայ. Այդ քաղաքներէն, 16. Մարուպպու<sup>(57)</sup> (և) Յարիթթու<sup>(58)</sup> քաղաքները, 17. Տիւրոսի<sup>(59)</sup> թագաւոր, Պալիի ձեռքերուն յանձնեցի, 18. նախկին հարկէն աւելի, իր տարեկան<sup>(60)</sup> հատուցումը, 19. տէրութեանս (վճարուած) տուրքը, բարձրացուցի, և զրի իր վրայ. 20. Եւ Սանտուարին, Գունտի<sup>(61)</sup> թագաւորը, 21. և Սիսուն<sup>(62)</sup>, լիրբ ոսոխ մը, 22. չի վախնալով իշխանութենէս, լքեց աստուածներու (ուղին) և, 23. ապաւինեցաւ սեպ լեռներու. 24. Ան (և) Ապտի-Միլգուլթին, Սիգոնի թագաւորը, 25. որդեցին իրար օգնել, և, 26. իրենց աստուածներու անունով, երգում ըրին իրարու հետ, և 27. ապաւինեցան լոկ իրենց ուժին. 28. (Բայց) ես, Աշուրին, Սինին, Շամաշին, Պելին և Նապուին, 29. մեծ աստուածներուն, տէրերուս ապաւինեցայ, և

## ՎԵՅԵՐՈՐԴ ՏԱԽՏԱԿ

30. զայն պաշարեցի, և թռչունի մը պէս լեռներէն, 31. բռնեցի զայն, և զըլխատեցի. 32. Թիշրի<sup>(63)</sup> ամսոյն, Ապտի-Միլգուլթիի գլուխը, 33. Ատար<sup>(64)</sup> ամսոյն,

Սանտուարիի գլուխը, 34. մէկ տարուայ մէջ, զլխատեցի. 35. չի յապաղեցայ առաջինին, և աճապարեցի վերջինին. 36. Յուցնելու համար ժողովուրդին, տիրոջ, Աշուրին զօրութիւնը, 37. կախեցի (զրենք) իրենց պետերու վիզէն, և գուսնէ (նետով) և քնարներով անցայ նինուէի հրապարակէն. 39. Արղայ<sup>(66)</sup> քաղաքը որ սահմանն է եգիպտոսի վտակին<sup>(67)</sup>, 40. կողոպտեցի, և Ասուխիին, իր թագաւորը, կապանքներու մէջ նետեցի, և 41. դրկեցի Ասորեստան. նինուէի մէջտեղի, աւազ գրան մօտ, 42. արջերով, շուններով և խոզերով, բնակիլ տուի զինքը, գերիի մը պէս. 43. Եւ Թէուշբան<sup>(68)</sup>, Կիմմերացիներուն, 44. Ումման-Մանտան, որուն տունը հեռու է, 45. Խուպուշայ երկրին մէջ, իր բովանդակ զօրքով, 46. փճացուցի սուրով, 47. Կիլիկիոյ ժողովուրդին վիզերը կոխկոտեցի, 48. (և) Տուայի, դժուարամերձ լեռներ բնակող, 49. Թապալայի<sup>(69)</sup> մօտ, վատ Հիթիթներ, 50. որոնք ապաւինեցան իրենց զօրաւոր լեռներուն, և 51. հինէն ի վեր չէին հնազանդ լուծիս, 52. իրենք քսան-մէկ անառիկ քաղաքները, և զիւրաքաղաքները իրենց շուրջը (գտնուող), 53. պաշարեցի, գրաւեցի, կողոպտեցի իրենց աւարները, տապալեցի<sup>(70)</sup>, քանդեցի, այրեցի կրակով, 54. իրենց փնցեալը, որ ոչ յանցանք և ոչ չարութիւն ունէր, 55. իշխանութեանս ծանր լուծը զրի իրենց վրայ. 56. ոսնակոխ ըրի Բարնապայի<sup>(71)</sup> ապիրատ ժողովուրդը, 57. որոնք Թու-Աշուրի մէջ կը բնակին, որ լեզուին մէջ, ժողովուրդին 58. Միսրանուի, Բիթանու կը կոչեն իրենց անունը. 59. Տարտղեցի Մաննայի<sup>(72)</sup> ժողովուրդը, նուաստը, անհուշ, 60. և իր գունդերը, (և) Ասկուզայի<sup>(73)</sup> Իշրազան, 61. դաշնակից մը, որ չազատեց զինքը, սպաննեցի սուրով. 62. Աւարեցի Պիթ-Տագգուրին, որ Գալտիի մէջն է, Բարելոնի ոսոխը, 63. ձերբակալեցի Շամաշ-Իպին<sup>(74)</sup>, իր թագաւորը, վատասեռած աւազակ մը, 64. չի սարսափելով տէրերուն տիրոջ հրամանէն, դաշտերը Բարելոնի որդիներուն, 65. և Պօրսիփայի բռնութեամբ գրաւեց, և 66. առաւ իրեն համար (Բայց) ես, սարսափը Պելի և Նապուի, 67. քանի որ գիտեմ, այդ դաշտերը վերագարձուցի և



## Ե Օ Յ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Խ Տ Ա Կ

68. յանձնեցի Բաբելոնի և Պորսիփայի որդիներուն. 69. Նապու-Շալլիմը<sup>(75)</sup>, Պալասի որդին, 70. իր գահին վրայ բազմել տուի, և կրեց իմ լուծը. 71. Պել-Իգիշան<sup>(76)</sup>, Պաւանուի որդին, Կամպուլայի, 72. որ երկու երկվեցեակ ժամ (հեռաւորութեամբ) ջուրի, 73. և խեցիներու մէջ, զետեղուած էր իր բնակարանը, 74. Աշուրի, աիրոջս հրամանով, սարսափը զայն հարուածեց, և 75. իր իսկ յօժար կամքով, (իրքի) տուրք և հարկ. 76. մեծ ցուլեր, անթերի, սպիտակ ջորիներու զոյգ մը, 77. էլամէն բերաւ, և դէպի Նինուէ, 78. եկաւ ներկայութեանս, և ոտքերս համբուրեց. 79. Գթացի իր վրայ և վստահութիւն ներշնչեցի (իր) սրտին. 80. Շարի-Պիլ, իր անառիկ քաղաքը, 81. աւելի ևս զօրացուցի, և 82. թողատրեցի որ, ինքը և իր աղեղնաւորները հոն ելլեն, և 83. զուռի մը պէս, նգեցի զայն էլամի դիմաց:

## Ձ Ո Ր Ր Ո Ր Դ Ս Ի Ի Ն Ա Կ

1. Ատումութուն<sup>(77)</sup>, անառիկ քաղաքն է) արարներու, 2. զոր Սենեքերիմ, Ասորեստանի թագաւորը, իմ հայրը, զիս ծնանողը, 3. գրաւած էր, և իր ինչքը, ստացուածքը, աստուածները, 4. մինչև (իսկ) իսպալաթուն, արարներու գլխուն, 5. աւարած էր և փոխադրած Ասորեստան. 6. Խազա(էլ)<sup>(78)</sup>, արարներու թագաւորը, իր թանկարժէք պարգևով, 7. դէպի Նինուէ, տէրութեանս քաղաքը 8. եկաւ, և համբուրեց ոտքերս. 9. իր աստուածներու (պատկերներուն) վերադարձման համար, պաղատեցաւ ինձի և զթացի իրեն, և 10. Աթար-Սամայն<sup>(79)</sup>, Տայ, Նուխայ, 11. Ռոզտաու, Ապրիլու, 12. Աթարգուրումա, արարներու<sup>(80)</sup> աստուածները, 13. իրենց փճացած (պատկերները) նորոգեցի, և Աշուրին, աիրոջս զօրութիւնը, 14. և անուանս արձանադրութիւնը անոնց վրայ գրեցի, և իրեն վերադարձուցի (զանոնք). 15. Թապուաբամիլը, հօրս պալատին մէջ մեծցած, թագաւորութեան համար, 16. կարգեցի անոնց վրայ, և իր աստուածուհիներով, վերադարձուցի զինքը իր երկիրը. 17. Վաթ-ուուն-հինգ ուղտ<sup>(81)</sup>, տասը զամբիկ, նախ-

կին հարկին վրայ, 18. յաւելուածականութեն զրի իր վրայ. 19. (Յետոյ) ճակատագիրը<sup>(82)</sup> տարաւ զինքը՝ Խազաէլը, և Եաթան, իր որդին, 20. իր գահին վրայ բազմեցուցի, և տասը Պաս<sup>(83)</sup> ոսկի, հազարաւոր փերուզակներ<sup>(84)</sup>, 21. յիսուն ուղտ, հարիւրաւոր սնտուկ անուշահոտ խտեր:

## Ն Օ Յ Ե Ր

46. Աքքատ. aluBit-su-pu-ri, այժմեան Այն-Սոֆարն է, Պէյրութէն քսան-մէկ քիլոմէթր դէպի արեւելք-հարաւ-արեւելք. Forrer, Die provinzeinteilung des Assyrischen Reiches, Leipzig, 1921, էջ 65:

47. Աքքատ. aluShik-nu-u, այժմեան Խան Էսսազիէն է, Սիզոնէն երկուք ու կէս քիլոմէթր դէպի հիւսիս-արեւելք:

48. Աքքատ. aluIn-im-me, այժմեան Տէր-էն-Նա'ամէն է, Սիզոնէն տասնհինգ քիլոմէթր դէպի հիւսիս-արեւելք:

49. Աքքատ. aluHi-il-du-a, այժմեան Խան Էլ-Հուլտէն է, էն-Նա'ամէն երկու քիլոմէթր դէպի հիւսիս:

50. Աքքատ. aluBi-'-ru-u, այժմեան Պէյրութն է:

51. Աքքատ. aluKi-il-me-e, այժմեան Բալմուէն է, Թարապուսէն տասը քիլոմէթր դէպի հարաւ-արեւմուտք:

52. Աքքատ. aluBi-ti-ru-me, թերեւս Պրամիէն, Պէյրութի մօտ, Murray, Guide to Syria, 1903, էջ 304:

53. Աքքատ. aluBit-gi-si-me-ia, այժմեան Խան Գալիմիէն է, Տիւրոսէն զրեթէ հինգ քիլոմէթր դէպի հիւսիս-արեւելք:

54. Աքքատ. aluBi-ir-gi, այժմեան Պարեան է, Սիզոնէն տասը քիլոմէթր դէպի հիւսիս-արեւելք:

55. Աքքատ. aluGa-am-bu-lu, Jumelat քնտանիքին մէջ, թերեւս, պահուած ըլլայ այս անունը, որոնց նահապետական տունն է Մուսթարան, Murray, Guide to Syria, էջ 284:

56. Աքքատ. aluDa-la-im-me, այժմեան Էտ-Տէհէմիէն, Սիզոնէն տասներկու քիլոմէթր դէպի հիւսիս-արեւելք:

57. Աքքատ. aluMa-ru-ub-bu, այժմեան Ատոււնն է, Forrer, Die provinzeinteilung



des Assyrisches reiches, Leipzig, 1921, էջ 65.

58. Ա.ք.քառ. aluSa-ri-ip-tu, այժմեան Սարաֆանան է.

59. Ա.ք.քառ. aluSur-ri, Տիւրսոն է, Սիդոնէն երեսուն-հինգ քիլոմէթր դէպի հարաւ, Ս. Դրական ܠܝܠܝ LXX Դժոհն է.

60. Տարի՝ ա.ք.քառ. shattu, երբ. ܫܬܬܐ, սուր. ܫܬܬܐ, ու. shnt, արամ. ܫܬܬܐ, արաբ. ܫܬܬܐ, սոււ. Mu-an-na, խորհրդանշերէն կը բաղկանայ, որ կը համապատասխանէ ճըշ-գրութեան եզրակոյտ. rn-ṣṭh, տես, American Journal of Semitic Languages and Literatures, հատոր 51, 1934, էջ 126.

61. Գունտի՝ ա.ք.քառ. aluKun-di, Գունտան է, Դարսուսի մօտ հին քաղաք էր, Winckler, Altorientalische forschungen, II, էջ 118.

62. Սիսուս՝ ա.ք.քառ. aluSi-is-su, Կի-լիկիոյ մէջ գտնուող Սիսն է. Dr. H. Zimmermann և Dr. H. Winckler, Die keilinschriften und das Alte Testament, Berlin, 1903, էջ 88, նոթ 1. Հին անուններն էին այդ քաղաքին, ἡ Σισαία, τὸ Σισαίον, κάστρον, Sysia, Kiepert, formae orbis antiqui, VII, էջ 19, յիշատակուած Revue Bibliqueի մէջ, 1911, էջ 203.

63. Թիշրի՝ ա.ք.քառ. arhuTashritu, սոււ. itDu, խորհրդանշիչը Սեպտ. - Նոկ-տեմբեր ամիսն է.

64. Ատար՝ ա.ք.քառ. arhuAddaru, Փե-տրուար-Մարտ ամիսն է.

65. Քնար՝ ա.ք.քառ. sammu, սոււ. gish Zag-Min խորհրդանշերէն կը բաղկանայ.

66. Արզայ՝ ա.ք.ք. aluAr-za-a, այժմեան Էլ-Արիշն է.

67. Եզրիպտոսի վտակ՝ ա.ք.քառ. Na-hal Mu-us-ri, անորոշ է տակաւին այս վտակին զետեղումը. E. F. Weidner, Archiv für Orientforschung, XIV, 1941, էջ 43, կը նոյնացնէ զայն Պաղեստինի և Եզրիպտոսի միջեւ գտնուող պարանոցին հետ, Weissbach, Zeitschrift für Assyriologie, XXXVIII, Neue Folge IV, 110. Ուատի-էլ-Արիշին հետ, H. Winckler, Mitteilungen der Vorder-asiatischen Gessellschaft, III/1 1898, էջ 10, Ռաֆիա քաղաքին մօտ գտնուող Wadi-ով մը.

68. Թէուշրա՝ ա.ք.քառ. amelTe-ush-pa, Թէսպիսի հետ կը նոյնանայ, երկրորդը Ա-քիմնեաններու, Revue Biblique, 1911, էջ 206.

69. Թապալա՝ ա.ք.քառ. aluTa-ba-al, Կաթաբալէր Կապադովկիայէն մինչև Սի-ժով:

70. Տապալեցի, քանդեցի, այրեցի կրակով՝ պատմական արձանագրութիւնն ըստ մէջ, յաճախակի գործածուող այս ճաբանութիւնը, տարուած յաղթանակի ուժգնութիւնը և կատաղութիւնը կը մատնանշէ՝ թելադրուած սնափառ հոգեբանութիւնէ մը.

71. Բարնազա՝ ա.ք.քառ. aluPar-na-ak-ku, Եփրատի և Պալիսի միջև կը գտնուի.

72. Մաննա՝ ա.ք.քառ. aluMan-na, Վա-նայ լճին հարաւը կը գտնուի.

73. Ասկուզա՝ ա.ք.քառ. aluAs-gu-zai, վրանարնակ Սկիւթացիներն են. Աշքուզայ նաև Իշկուզայ, որմէ Յոյները հետևեցուցին Σαύβαι. H. Winckler, Altorientalische forschungen, էջ 488.

74. Շամաշ-Իպի կը նշանակէ «Շամաշ ստեղծեց».

75. Նապու-Շալլիմ կը նշանակէ «Նապուս ուրախ է». տես Mitteilungen der Vorderasiatisch-Aegyptischen Gessellschaft, 1939, Band 44. — Die Akkadische Namengebung, J. Y. Stamm, էջ 270.

76. Պել-Իզիշա կը նշանակէ «Պել նը-ւիրեց».

77. Ատումութու՝ ա.ք.քառ. aluA-dum-mu-tu, հաւանաբար Տումաթ-էլ-Ճէնտէլ, այսօրուայ Էլ-Ճօֆն է, բաղդատել Ս. Դրա-կան ܠܝܠܝ, Ծնն. 25, 14. Պաղոմէոսի, V, 19, 7, Δουμείδα ἢ Δουμαΐδα. — Trude Weiss Rosmarin, Aribie und Arabien in den Babylo- nisch-Assyrischen Quellen, Journal of the So- ciety of Oriental Researchի մէջ, XVI, 1932, էջ 14.

78. Խազաէլ, ա.ք.քառ. amelHa-za-ilu, Սենեքերիմի և Ասսուրպանիբալի շրջան- ներուն նաև իշխած է. բաղդատել Ս. Դրա- կան ܠܝܠܝ, 1 Թագ. 19, 15, 17.

79. Աթար-Սամայն կը նշանակէ «եր- կընքի Աթարը».

80. Յորդանանին արեւելակողմը, Ա- րարիոյ հիւսիսային հողամասին կ'ակնարկ- ուի.

81. Ուզա, imergammalu, ա.ք.քառացած ձևն է սկզբնական սոււ. anshagam-mal խոր- հրդանշին, imergammalu, նոյնպէս երբայ. ܠܡܓܐ, արաբ. ܬܠܐ, սուր. ܬܠܐ:



82. Shim-tu u-bal-li-ma «ճակատագիրը տարաւ» արտայայտութիւնը մեռնելու հոմանիշ է:

83. Սուսերական է ծագումը այս բառին՝ Ma-na, 0.5 քկ. արժողութեամբ կշիռ մը, Ամբողջ յառաջաւոր Ասիոյ մէջ, եզրագատէն մինչև Հնդկաստան տարածուած էր այս կշիռը. Reallexicon der Indogermanischen Altertumskunde, O. Schrader, Strassburg, 1901, էջ 284: Հնդեւրոպական, սեմական լեզուախումբերու և եզրագործներէն մէջ կը հանդիպինք այս բառը: 1. — Հնդ. սանս. mana, Dictionnaire Sanscrit-Français, Par N. Stchou-pak, L. Nitti, և L. Renou, Paris, 1932, էջ 563, յուն. μένα, μένα, լատ. mina, հայ. մնաս, գերմ. mine, ֆր. mine: 2. — Սեմ., Ուկ. mn, Ugaritic Handbook, C. H. Gordon, Roma, 1947, էջ 246. եբր. מנח, ասոր. ܡܢܚ, արաբ. من, արամ. מנח: 3. եզրագործներէն մէջ, mn, Wörterbuch der Aegyptischen Sprache, Adolf Erman und Hermann Grapow, Zweiter Band, Leipzig, 1928, էջ 82:

84. abnābi-ru-ti Փերուզակ կը նշանակէ, որովհետեւ, 1. — Սինալի փերուզակի հանքերը եզրագործէն շատ հեռու չեն. 2. — Արաբերէն پيرزاه, պարսկերէնը pirōzah, ասորերէնը ܦܝܪܐܝܬ, և 3. — փոքրիկ գնդիկներու թուումը, մեր բնագրին մէջ (1.000): R. C. Thompson, A Dictionary of Assyrian Chemistry and Geology, London, 1936, էջ 134:

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԱՐԴ. ՁԴՋԱՆԵԱՆ

(Ճարտագիտի 3)



## ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՍԸ

ՅԱԽԵԼՈՒԱԾ

ՄԱԶԴԷԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՆՈՐ ԴԱԽԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Զրադաշտը, Իրանի կամ Պարսկաստանի կրօնական բարեկարգիչ մըն էր, որ ապրեւցաւ շուրջ 2000-2200 տարիներ առաջ (ն. Ք.): Զրադաշտը, քրմական նշանաւոր ընտանիքէ մը սեռած էր, ինքն ալ քուրմ մը եղաւ և միևնոյն ժամանակ քուրմի պաշտօն վարեց: Բակիրիան իր հայրենիքը եղաւ: Ան՝ կէս-աստուածներու, անկասար կրօնքի մը թշնամի և հակառակորդ անձ մը եղաւ, որ ի գին ամէն բանի և զոհողութեանց ուղեց Իրանական կամ Պարսկական կրօնքը բարեկարգել: Ումանք՝ Զրադաշտը, ո՛չ բարեկարգիչ և ո՛չ ալ նոր կրօնքի մը հիմնադիր չեն ուղեր ճանչնալ, այլ՝ լոկ փոթորիկի և հովերու չաստուած մը կ'ուզեն ներկայացնել զայն, ումանք՝ անոր հայրենիք կուտան Մարաստանը այժմեան Ատրպատականը (Աղլըպէյճանի հանրապետութիւնը):

Զրադաշտ, շուրջ 20 տարեկանին իրրեւ մենակեաց և ճգնաժամ մը աշխարհէն քաշուեցաւ և մեկուսացաւ բարձր լեռան մը վրայ: Հոն, լեռներու և բարձրութեանց վրայ, աղօթքով, հսկումներով և ծովապահութեամբ ու խորհրդածութիւններով իր կեանքը անցուց: Ըստ աւանդութեան, Զրադաշտը, շուրջ 30 տարեկանին, գետեղերքը, Ատրպատականի մէջ, ի վերուստ յայտնութիւն մը, տեսիլք մը ունեցաւ: Հոն, գետեղերքը, Վոհու-Մանու-Վեհի-մաց ոգին) իրեն երեցաւ և զայն յախտնականին Աստուծոյ զահին առջև առաջնորդեց, որուն հետ Զրադաշտը սկսաւ յարգանքով խօսիլ, երկիւղածութեամբ և հնա-